




ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ք



- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂ
- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԱՆ ՋՐԵՐ
- ✓ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	6
Երևան	6
Գյումրի	14
Վանաձոր	16
Ալավերդի	19
Հրազդան	21
Արարատ	24
Հանրապետության տարբեր բնակավայրեր	26
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ	27
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	28
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	33
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	38
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	44
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	48
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	53
ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2018թ. 4-րդ եռամսյակում	59
Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2018թ. 4-րդ եռամսյակում	62
Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ	66
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»	75
Հավելված 1. ՀՀ գետերի ջրերի որակը 2018թ. 4-րդ եռամսյակում	77
Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերը	95
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	99
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	100
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	100
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	101
Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	101
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը	102
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ	103
Ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի և անտրոպոգեն ծագումով նյութերի թույլատրելի սահմանային կոնցենտրացիաների նորմերը	104

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրքում ներկայացված են մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային տեղումների, հողերի, հատակային նստվածքների որակի մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն՝ 2018 թվականի 4-րդ եռամսյակն ընդգրկող ժամանակահատվածի համար:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգ իրականացվում է տարվա մեջ մեկ անգամ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն մակերևութային ջրերի ձկնատընտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ընդունված՝ 1990թ.):

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 23 շատրվանոց հորատանցք, 22 չշատրվանոց հորատանցք և 55 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N876-Ն որոշման:

Ներկայումս հողային ծածկույթի մոնիթորինգ իրականացվում է Ծաղկաձոր քաղաքում: Յուրաքանչյուր հողի նմուշում որոշվում է մինչև 30 ինդիկատորային ցուցանիշ (մետաղական կազմ): Հողերի աղտոտվածության գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N01-Ն որոշման:

Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի և ջրի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում է մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային համագործակցության շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները.

- «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:

- Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ կատարում է սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների ուսումնասիրություններ՝ երկու երկրների տարածքներից աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում տվյալների փոխանակում:

Տեղեկագրում օգտագործվել են հետևյալ հապավումները.

- ՍԹԿ — սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
- ԸԱԱ — ընդհանուր անօրգանական ազոտ
- ԸԼԱ — ընդհանուր լուծված աղեր
- ԿՆ — կախյալ նյութեր

ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի,
ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանց



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

2018թ. 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 14 անշարժ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայան, որոնցից չորսում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են նաև ավտոմատ դիտարկումներ, և 197 շարժական պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին ակտիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 3519 փորձանմուշ: Հանրապետության 9 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է մթնոլորտային օդի 4396 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքների շարժական դիտակետերում կատարվել է մթնոլորտային օդի՝ համապատասխանաբար 54561 և 23134 ավտոմատ դիտարկում:

Երևան քաղաքի մթնոլորտում փոշու միջին ամսական կոնցենտրացիաները չնայած գտնվում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՄԹԿ) տիրույթում, բայց օրվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվում են գերազանցումներ, ինչը պայմանավորված է ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման այլ օջախներով, այնպես էլ կանաչապատ տարածքների պակասով: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածությունը բարձր է եղել նաև Հրազդան և Ալավերդի քաղաքներում:

Մնացած քաղաքներում աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի*** և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և հինգ անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած երեք դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2018թ. 4-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 54561 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 1713 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 945 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

* կախված մասնիկներ

** անհիդրիդ ծծմբային

*** ածխածնի օքսիդ

*Երևան քաղաքի մթնոլորտային օդի 2018թ. 4-րդ եռամսյակում կատարված
դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)*

Հոկտեմբեր

<i>Աղտոտող նյութ</i>	<i>ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³</i>	<i>Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³</i>	<i>Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)</i>	<i>Դիտար- կումների քանակ</i>	<i>ՄԹԿ-ից գերազան- ցումների քանակ</i>
<i>Ծծմբի երկօքսիդ</i>	<i>0.05</i>	<i>0.029</i>	<i>0.094 (դիտ. № 7)</i>	<i>155</i>	<i>14</i>
<i>Ազոտի երկօքսիդ</i>	<i>0.04</i>	<i>0.019</i>	<i>0.119 (դիտ. № 1)</i>	<i>152</i>	<i>10</i>
<i>Փոշի</i>	<i>0.15</i>	<i>0.083</i>	<i>0.337 (դիտ. № 7)</i>	<i>142</i>	<i>23</i>
<i>Գետնամերձ օզոն</i>	<i>0.03</i>	<i>0.006</i>	<i>0.017 (դիտ. № 2)</i>	<i>155</i>	<i>-</i>


Նոյեմբեր

<i>Աղտոտող նյութ</i>	<i>ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³</i>	<i>Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³</i>	<i>Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)</i>	<i>Դիտար- կումների քանակ</i>	<i>ՄԹԿ-ից գերազան- ցումների քանակ</i>
<i>Ծծմբի երկօքսիդ</i>	<i>0.05</i>	<i>0.025</i>	<i>0.059 (դիտ. № 18)</i>	<i>150</i>	<i>11</i>
<i>Ազոտի երկօքսիդ</i>	<i>0.04</i>	<i>0.018</i>	<i>0.051 (դիտ. № 7)</i>	<i>150</i>	<i>4</i>
<i>Փոշի</i>	<i>0.15</i>	<i>0.087</i>	<i>0.326 (դիտ. № 1)</i>	<i>142</i>	<i>20</i>
<i>Գետնամերձ օզոն</i>	<i>0.03</i>	<i>0.006</i>	<i>0.026 (դիտ. № 8)</i>	<i>150</i>	<i>-</i>



Դեկտեմբեր


<i>Աղտոտող նյութ</i>	<i>ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³</i>	<i>Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³</i>	<i>Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)</i>	<i>Դիտար- կումների քանակ</i>	<i>ՄԹԿ-ից գերազան- ցումների քանակ</i>
<i>Ծծմբի երկօքսիդ</i>	<i>0.05</i>	<i>0.024</i>	<i>0.071 (դիտ. № 7)</i>	<i>130</i>	<i>5</i>
<i>Ազոտի երկօքսիդ</i>	<i>0.04</i>	<i>0.010</i>	<i>0.030 (դիտ. № 2)</i>	<i>130</i>	<i>-</i>
<i>Փոշի</i>	<i>0.15</i>	<i>0.099</i>	<i>0.273 (դիտ. № 8)</i>	<i>127</i>	<i>24</i>
<i>Գետնամերձ օզոն</i>	<i>0.03</i>	<i>0.010</i>	<i>0.078 (դիտ. № 18)</i>	<i>130</i>	<i>-</i>

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնիթինգի կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Ծծմբի երկօքսիդ (SO_2)
Կոնց. ($մգ/մ^3$)


Երևան



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.


Ազոտի երկօքսիդ (NO_2)

Երևան




Ազոտի երկօքսիդ (NO_2)
Կոնց. ($մգ/մ^3$)

Երևան






Ազոտի երկօքսիդ (NO_2)




Երևան





Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Գյումրի


Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Անշարժ դիտակայանում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 88 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման 571 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:




Անշարժ դիտակայաններում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 695 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման 623 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 1.6 անգամ: Փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




* Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Վանաձոր քաղաքի ծծմբի երկօքսիդի տվյալները ցածր վստահելիության պատճառով օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել:

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների կոնցենտրացիաների փոփոխությունները.




Ծծմբի երկօքսիդ (SO_2)
 Կոնց. (մգ/մ³)

Վաճառք



Ազոտի երկօքսիդ (NO_2)
 Կոնց. (մգ/մ³)

Վաճառք





Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:


2018 թվականի 4-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 23134 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 676 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1090 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին ՍԹԿ-ն գերազանցել է 2.2 անգամ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 1.7 անգամ, դեկտեմբերին՝ 1.1 անգամ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան նոյեմբերին չի գերազանցել ՍԹԿ-ն: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



* Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Ալավերդի քաղաքի ծծմբի երկօքսիդի տվյալները ցածր վստահելիության պատճառով օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել:






Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:



Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 260, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 372 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն հոկտեմբերին՝ 2.1 անգամ, նոյեմբերին՝ 2.2 անգամ, դեկտեմբերին՝ 1.5 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար




Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



- Պայմանական նշաններ
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակետեր
 - ▲ Արդյունաբերական կետեր
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Գետային ցանց
 - Բնակավայրերի սահման
 - ▨ Աղբյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Արարատ



Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակետում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 87 փորձանմուշ, շարժական դիտակայաններում պասիվ նմուշառման եղանակով՝ 288 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Հանրապետության տարբեր բնակավայրեր

Կապան, Քաջարան, Չարենցավան քաղաքների մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: 2018 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 131 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 176 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 200 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



ՄԱԿԵՐՆՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

2018թ. 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ իրականացվել է հանրապետության 42 գետի, Երևանյան լճի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի ջրամբարների և Արփա-Սևան թունելի դիտակետերից, որտեղից վերցվել է 164 փորձանմուշ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները, որոնք չեն գերազանցել համապատասխան էկոլոգիական նորմերը՝ սահմանված ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2-ում:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն 2018թ. 4-րդ եռամսյակում ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը հիմնականում գնահատվել է «լավ» և «միջակ» (2 և 3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս): Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Աշտարակ և Ապարան քաղաքներից հետո, Գետառ գետը՝ գետաբերանի հատվածում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում: Հանքարդյունաբերության գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում են Ախթալա, Դեբեդ, Շնող, Ողջի, Աճանան (Նորաշենիկ), Կարճևան գետերը, որտեղ ջուրը գնահատվել է «վատ» որակի (5-րդ դաս):

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական և որակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրներում*, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 22 չշատրվանող հորատանցք և 56 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: 2018թ. 4-րդ եռամսյակում կատարվել է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ ազգային ցանցում ընդգրկված ջրաղբյուրների 40 դիտակետում, որոշվել է 40-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ, որոնց մասին ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրքում:

* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկագրի 100-րդ էջում աղյուսակի տեսքով

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Փամբակ գետի Հարթագյուղից վերև հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սպիտակից ներքև հատվածում ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Վանաձորից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի Մարցիգետի թափման կետից ներքև հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Չորագետ գետի Ստեփանավանից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի Միխայելովկայից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Մարատովկայից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մարցիգետ գետի գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Ախթալա գետի գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Գարգառ գետի ակունքում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Շնող գետի գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի Դիլիջանից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Դիլիջանից ներքև և Իջևանից վերև հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Իջևանից ներքև հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):


Գետիկ գետի Վահան գյուղից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):






Ստորերկրյա ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 1 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացվում են գրաֆիկների տեսքով: 2058 դիտակետում ընդհանուր լուծված աղերի (0.82 գ/լ) և նիտրատ իոնի (9.51 գ/լ) կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները.



ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿՐ


Հոկտեմբեր / 2018






ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|--|-----------------------------------|
| ● Մարզկենտրոն | ● Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● Քաղաքներ | ● 2-րդ դաս |
| ● Գյուղեր | ● 3-րդ դաս |
| ▲ Մակերևութային ջրերի որակի նմուշառման դիտակետեր | ● 4-րդ դաս |
| — Գետային ցանց | ● 5-րդ դաս |
| — ՀՀ պետական սահման | |
| — ԼՃեր և ջրամբարներ | |
| — Դերեղ գետի ավազան | |

Նոյեմբեր / 2018



ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | | | |
|---|--|---|---------------------------------|
|  | Մարզկենտրոն |  | Մակերևութային ջրերի որակի դասեր |
|  | Քաղաքներ |  | 2-րդ դաս |
|  | Գյուղեր |  | 3-րդ դաս |
|  | Ստորերկրյա ջրերի ղիտակետեր |  | 4-րդ դաս |
|  | Մակերևութային ջրերի որակի նմուշառման ղիտակետեր | | |
| | Գետային ցանց | | |
|  | ՀՀ պետական սահման | | |
|  | Աղստև գետի ավազան | | |

Ախտության ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրեր


Ախտության գետի Ամասիայից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գյումրիից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գյումրիից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Բազարանից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածներում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ռանչպարից ներքև ընկած հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):











Ստորերկրյա ջրեր

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրյուրում, 7 շատրվանող և 15 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 15 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով.






ԱՆՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
 - ▲ Մակերևութային ջրերի որակի նմուշառման դիտակետեր
 - ◆ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Ախուրյան գետի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ
ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Քաղաքներ
 - Գյուղեր
 - Ստորերկրյա ջրերի ղիտակետեր
 - Գետային ցանց
 - ՀՀ պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Մեծամոր գետի ավազան



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր


Քասախ գետի ջրի որակը Ապարանից վերև ընկած հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Ապարանից ներքև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աշտարակից վերև և Աշտարակից ներքև ընկած հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Քասախ գետի գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):





Շաղվարդ գետի Փարպիից ներքև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Հրազդան գետի Քաղսիից ներքև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Արգելից ներքև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս): Երևանից ներքև և Գեղանիստի մոտ ընկած հատվածներում երեք ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գետառ գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Մարմարիկ գետի Հանքավանից վերև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):











Ստորերկրյա ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 8 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





ՔԱՍԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Զրմբ. նմուշառման դիտակետեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի նմուշառման դիտակետեր
- ◆ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- Լճեր և ջրամբարներ
- Քասախ գետի ավազան

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս




ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Զրմբ. նմուշառման դիտակետեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի նմուշառման դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- ԵՐԵՎԱՆ
- Հրազդան գետի ավազան



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Մեանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ջկնագետ գետի Մեմյոնովկայից վերև ընկած հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի գետաբերանում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Հոկտեմբերին Սոթք գետի հանքավայրից վերև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի գետաբերանում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Վարդենիս գետի Վարդենիկից վերև և գետաբերանի հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մարտունի գետի Գեղիովիտից վերև և գետաբերանի հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Արգիճի գետի գետաբերանում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Ծակքար գետի գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Շողվազ գետի գետաբերանում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Գավառագետ գետի Ծաղկավանից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր

Մեանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնաղբյուրում, 6 շատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:









	Մարզկենտրոն
	Քաղաքներ
	Գյուղեր
	Մակերևութային ջրերի որպակի նմուշառման դիտակետեր
	Ստորերկրյա ջրերի դիտակետեր
	Գետային ցանց
	ՀՀ պետական սահման
	Լճեր և ջրամբարներ
	Մեանի ջրավազանային կառավարման տարածք

*Մակերևութային ջրերի
որակի դասեր*

- 2-րդ դաս
3-րդ դաս
4-րդ դաս



Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Վեդի գետի Ուրցաձորից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Արփա գետի Զերմուկից վերև ընկած հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Վայքից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Վայքից ներքև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Եղեգնաձորից վերև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Արենիից ներքև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):





Եղեգիս գետի Շատինից ներքև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




Արփա-Սևան թունելի ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնադրյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:








ԱԶԱՏ ԵՎ ՎԵՂԻ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ


Հոկտեմբեր / 2018



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Ջրմբ. նմուշառման
դիտակետ
- Մակերևութային ջրերի որակի
նմուշառման դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի
դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Վեղի գետի ավազան
- Ազատ գետի ավազան
- Մակերևութային ջրերի
որակի դասեր
- 2-րդ դաս
- 3-րդ դաս

Նոյեմբեր / 2018



**ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**

Հոկտեմբեր / 2018




0 3 6 12 18
կմ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|------------------------------|-----------------------------------|
| ● Մարզկենտրոն | ● Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● Քաղաքներ | ● 2-րդ դաս |
| ● Գյուղեր | ● 3-րդ դաս |
| ● Ջրմբ. նմուշառման դիտակետեր | ● 4-րդ դաս |
| ● Ստորերկրյա ջրերի դիտակետեր | |
| — Գետային ցանց | |
| — 22 պետական սահման | |
| — Արփա գետի ավազան | |
| — Արփա գետի ավազան | |

Նոյեմբեր / 2018



0 3 6 12 18
կմ

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Մեղրի գետի Մեղրիից վերև ընկած հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Կարճևան գետի գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի Քաջարանից վերև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Քաջարանից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Կապանից վերև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Կապանի օդանավակայանից ներքև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի Աճանանից վերև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):



Գեղի գետի Աջաբաջից վերև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Որոտան գետի Գորայքից վերև ընկած հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Միսիանից վերև և ներքև, ինչպես նաև Տաթև ՀԷԿ-ից ներքև ընկած հատվածներում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Միսիան գետի Արևիսից վերև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Վարարակ գետի Գորիսից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Գորիսից ներքև ընկած հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):









Ստորերկրյա ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 4 դիտակետում լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:








ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ
ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- | | |
|--|--|
| ● Մարզկենտրոն | Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● Քաղաքներ | ● 3-րդ դաս |
| ● Գյուղեր | ● 4-րդ դաս |
| — Գետային ցանց | ● 5-րդ դաս |
| — ՀՀ պետական սահման | |
| □ Մեղրի գետի ավազան | |




ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ



ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ


Հոկտեմբեր / 2018



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|--|---------------------------------|
| ● Քաղաքներ | Մակերևութային ջրերի որակի դասեր |
| ● Գյուղեր | 2-րդ դաս |
| Մակերևութային ջրերի որակի նմուշառման դիտակետ | 3-րդ դաս |
| Ստորերկրյա ջրերի դիտակետեր | 4-րդ դաս |
| — Գետային ցանց | 5-րդ դաս |
| — ՀՀ պետական սահման | |
| — Լճեր և ջրամբարներ | |
| — Որոտան գետի ավազան | |

Նոյեմբեր / 2018



ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2018թ. 4-րդ եռամսյակում

Ախուրյանի ջրամբարում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Ապարանի ջրամբարում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Երևանյան լճում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս): Ազատի ջրամբարում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Կեչուտի ջրամբարում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Հոկտեմբեր

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	ԿՆ	3-րդ	4-րդ
		ԹՔՊ	4-րդ	
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	Լուծված թթվածին	4-րդ	4-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԸԱԱ	3-րդ	4-րդ
		Լուծված թթվածին	4-րդ	
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ (113)	ԹԿՊ ₅	3-րդ	3-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	-	2-րդ	2-րդ

Նոյեմբեր

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	Լուծված թթվածին, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ (113)	-	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	-	2-րդ	2-րդ



Դեկտեմբեր

<i>Ջրային օբյեկտ</i>	<i>Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դասը</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դասը</i>
<i>Երևանյան լիճ</i>	<i>ամբարտակի մոտ (112)</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>

Արաքս գետ

2018թ. 4-րդ եռամսյակում վերցվել են փորձանմուշներ Արաքս գետի ջրի 11 դիտակետից: Վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական ՍԹԿ-ներով գնահատման, դիտվում է վանադիումով, որոշ փորձանմուշներում պղնձով, քրոմով, մանգանով, երկաթով, ալյումինով և նիտրիտ իոնով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են լուծված թթվածնի, ԹԿՊ_5 -ի, ԹՔՊ -ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, ցինկի, նիկելի և սելենի ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների տրվում է աղյուսակների տեսքով: Հատակային նստվածքներում հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին որոշված որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են աղյուսակների տեսքով:

«ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՏԻ ՋՐԻ
ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



Արարս գետի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2018թ. 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)												
	Լուծված թթվածին, ՍԹԿ>6 մգ/լ	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ	Այրումին, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Սուրմալու գյուղի դիմաց (25)	–	–	–	–	–	3.1	2.8	–	14.5	–	–	6.2	1.3
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	1.6	1.2	4.7	6.1	1.5	2.9	7.2	6.6	16.2	–	1.2	6.1	2.0
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	1.9	1.4	6.2	6.5	1.6	3.9	8.8	7.2	17.7	1.3	1.3	7.2	2.3
Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև (28)	1.7	–	2.1	10.9	1.6	4.5	8.8	7.6	18.2	1.5	1.3	8.5	2.3
Ազարակի քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	–	1.3	–	–	2.5	3.2	8.3	3.9	17.5	–	1.2	3.8	3.3
Ազարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	–	–	–	1.3	2.5	5.5	8.6	4.6	18.0	1.3	–	4.7	3.2
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	–	1.5	–	–	2.2	10.2	8.8	7.1	18.9	3.0	–	9.4	3.1
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	–	–	–	–	2.4	83.9	10.4	29.5	32.7	17.7	–	37.6	3.2

Նույնիքներ

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)													
	Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ, ՍԹԿ=3 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Նատրիում ՍԹԿ=120 մգN/լ	Յինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ	Մեկեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Սուրմալու գյուղի դիմաց (25)	–	–	–	–	–	–	4.1	1.5	1.2	4.4	6.9	1.2	9.9	–
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	–	1.7	4.7	1.3	–	–	5.4	2.5	–	6.4	11.5	1.4	10.8	–
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	–	2.6	5.7	1.5	–	–	4.4	1.4	–	5.2	12.9	1.4	6.5	–
Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև (28)	–	–	4.8	1.4	–	1.8	20.8	8.6	3.5	41.3	21.4	6.2	43.4	–
Ագարակի քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	1.5	–	–	2.4	–	–	4.6	5.7	1.3	5.3	14.8	2.2	12.7	2.6
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	1.3	–	–	2.4	–	–	14.3	6.1	1.6	12.7	15.2	3.1	18.0	2.8
Մեղրի գետի թափման կետից վերև (AMS-3)	–	–	–	1.8	–	–	9.4	7.1	1.7	9.2	14.3	3.6	21.0	2.6
Նորդուզի անցակետից վերև (IMS-1)	1.2	–	–	2.4	–	–	4.6	6.6	1.4	6.4	15.1	2.4	14.7	2.6
Ագարակ քաղաքի դիմաց (IMS-3)	1.5	–	–	2.4	1.2	–	4.1	9.4	–	5.2	18.6	1.7	11.1	2.8
Բորդաշտ ուտիկանատուն (IMS-5)	1.3	–	–	2.4	–	–	6.0	9.2	1.4	6.8	16.9	2.5	15.1	2.4

Դեկտեմբեր

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)									
	Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ, ՄԹԿ=3 մգ/լ	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0,024 մգN/լ	Պրիմձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	–	–	2.0	3.4	3.2	6.7	2.6	12.9	5.4	–
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	–	–	3.4	5.2	3.5	7.4	3.5	15.4	3.4	1.3
Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև (28)	1.2	1.3	–	3.9	2.5	6.8	1.8	12.1	4.9	1.3

Արաքս գետի հատակային նստվածքներում որոշված որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են աղյուսակի տեսքով.

Հոկտեմբեր

Կոնցենտրացիա, գ/կգ	Դիտակետ			
	<i>AMS_1</i>	<i>AMS_2</i>	<i>AMS_3</i>	<i>AMS_6</i>
<i>Ալյումին</i>	<i>5.90</i>	<i>10.54</i>	<i>18.86</i>	<i>4.01</i>
<i>Երկաթ</i>	<i>18.14</i>	<i>59.26</i>	<i>33.22</i>	<i>17.11</i>
<i>Մանգան</i>	<i>0.993</i>	<i>0.970</i>	<i>0.765</i>	<i>0.302</i>
<i>Նիկել</i>	<i>0.192</i>	<i>0.118</i>	<i>0.122</i>	<i>0.013</i>
<i>Պղինձ</i>	<i>0.048</i>	<i>0.707</i>	<i>0.451</i>	<i>0.642</i>
<i>Արսեն</i>	<i>0.011</i>	<i>0.021</i>	<i>0.010</i>	<i>0.005</i>
<i>Մոլիբդեն</i>	<i>0.0002</i>	<i>0.0483</i>	<i>0.0114</i>	<i>0.0320</i>

Նոյեմբեր

Կոնցենտրացիա, գ/կգ	Դիտակետ					
	<i>AMS_1</i>	<i>AMS_2</i>	<i>AMS_3</i>	<i>IMS_1</i>	<i>IMS_3</i>	<i>IMS_5</i>
<i>Ալյումին</i>	<i>2.82</i>	<i>22.41</i>	<i>12.74</i>	<i>6.23</i>	<i>8.96</i>	<i>10.20</i>
<i>Երկաթ</i>	<i>13.15</i>	<i>16.53</i>	<i>15.64</i>	<i>14.50</i>	<i>19.78</i>	<i>12.66</i>
<i>Մանգան</i>	<i>0.765</i>	<i>0.326</i>	<i>0.341</i>	<i>0.715</i>	<i>0.754</i>	<i>0.360</i>
<i>Նիկել</i>	<i>0.181</i>	<i>0.036</i>	<i>0.012</i>	<i>0.178</i>	<i>0.144</i>	<i>0.010</i>
<i>Պղինձ</i>	<i>0.043</i>	<i>0.400</i>	<i>0.393</i>	<i>0.045</i>	<i>0.043</i>	<i>0.298</i>
<i>Արսեն</i>	<i>0.010</i>	<i>0.005</i>	<i>0.003</i>	<i>0.010</i>	<i>0.009</i>	<i>0.003</i>
<i>Մոլիբդեն</i>	<i>0.0005</i>	<i>0.0325</i>	<i>0.0275</i>	<i>0.0004</i>	<i>0.0001</i>	<i>0.0226</i>

Ծաղկածորում շրջակա միջավայրի մոնիթորինգ



Մթնոլորտային օդ

